«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 35/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 23.10.2018թ. ժամը 15:00

Փաստաբան՝ Դիաննա Անտոնյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 18.09.2018թ ստացված դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Արմեն Անանյանի սնանկության գործով կառավարիչ՝Ալեքսանդր Կարակեչյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Հոկտեմբերի 23-ին ժամը 15.00-ին՝ 11.10.2018թ-ին տեղափոխված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու՝ փաստաբան-Դիաննա Անտոնյանը
Քաղաքացի Արմեն Անանյանի սնանկության գործով կառավարիչ՝Ալեքսանդր Կարակեչյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Քաղաքացի Արմեն Անանյանի սնանկության գործով կառավարիչ՝Ալեքսանդր Կարակեչյանը

Դիմումատու Դիաննա Անտոնյանը ծանուցվել էր նիստի մասին, սակայն նիստին չէր ներկայացել:

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ
Փաստաբան՝ Դիաննա Անտոնյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 18.09.2018թ ստացված դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Արմեն Անանյանի սնանկության գործով կառավարիչ Ալեքսանդր Կարակեչյանի գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, գրության մեջ նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, որ «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.4-րդ կետի համաձայն, հանձնաժողովի նիստի վայրի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված սնանկության գործով կառավրչի և/կամ այլ անձնաց բացակայությունը արգելք չէ կառավարչի նկատմամբ հարուցված կարգապահական խախտման քննարկման համար և առաջարկեց նիստը շարունակել առանց դիմամտուի, քանի որ կողմը պատշաճ ծանուցվել է:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց 18.09.2018թ-ին Փաստաբան Դիաննա Անտոնյանից ստացված դիմումը և հայտնեց այն կարծիքը,որ դիմումը ըստ էության վերաբերվում է 18.07.2018թ-ին ներկայացված դիմումի հիմքով,14.08.2018թ-ին տրված հանձնաժողովի թիվ 25/02 եզրակացությանը, որին չհամաձայնելով փաստաբանը առանց նշելու թե ում շահերն է պաշպանում և ում կողմից է լիազորված ներկայացրել է դիմում պահանջելով՝Հանձնաժողովի ***«փաստական կեղծ տվյալների»*** հիմքով կայացրած ***«ապօրինի»*** եզրակացության հետևանքների վերացում:

Հանձնաժողովի նախագահն հայտնեց նաև այն կարծիքը, որ այո դիմումը հիմնականում վերաբերվում է հանձնաժողովի տված եզրակացությանը,որի հետ համաձայան չէ փաստաբանը,բայց իր դիմումում նա պետք է գոնե նշեր այն ***«փաստական կեղծ տվյալների»*** մասին, որոնք ներառվել են եզրակացության մեջ,բայց ոչ մի փաստ չի նշվել,երկրորդ՝ դիմումը ներկայացվել է փաստաբանի անունից չնշելով, թե ում շահերն է պաշպանում այդ փաստաբանը և ում կողմից է լիազորված այդ դիմումի ներկայացման համար,դատելով դրանից դիմումը ունի մի նպատակ՝ տարբեր հարցերում կառավարչի համար բարդություններ ստեղծել,որը նրան կխոչընդոտի իր լիազորությունների պատշաճ կատարման ընթացքում,այն է ՝ք.Հրազդան,Հատիսի փող.1/37 հասցեի գույքի մասով:Հանձնաժողովի նախագահն նշեց նաև, որ Դիաննա Անտոնյանը բողոքների միջոցով որոշել է ազդել կառավարչի գործողությունների վրա, իսկ այս դիմումը արդեն նպատակ է հետապնդում այդ ազդման գործընթացին ներգրավվել նաև հանձնաժողովին և Դիտորդ Խորհրդին:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը ձայն վերցրեց և հայտնեց այն կարծիքը,որ այս դիմումը ըստ էության պետք է քննարկման առարկա դառնար Դիտորդ խորհրդի նիստում,քանի որ Կարգապահական հանձնաժողովի եզրակացության հետևանքները կարող է վերացվել միայն Դիտորդ Խորհրդի որոշումներով,ուստի առաջարկում է չքննարկել դիմումը և վերադարձնել այն «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդում հետագա քննարկման համար:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը համաձայնեց այդ կարծիքի հետ և ավելացրեց,որ չնայած իր կարծիքով դիմումը հիմնավորված չէ փաստական հանգամանքներով և գրված է առանց լիազորությունների ճշտված փաստաբանի կողմից,իր մեջ ներառում է ապօրինի պահանջ,հետևանքների վերացման վերաբերյալ,հաշվի չառնելով,որ հանձնաժողովի եզրակացությունը կրում է խորհրդատվական բնույթ դիտորդ Խորհրդի որոշման համար:

Հանձնաժողովի անդամը նշեց նաև որ «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովը իրավասու չէ քննարկելու դիմումը և գալու եզրակացության,քանի որ դիմումը վերաբերվում է նույն հանձնաժողովի 14.08.2018թ-ին թիվ 25/02 եզրակացությանը,որի վերաբերյալ իր ընկալմամբ պետք է կարծիք հայտնի «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ Խորհրդը:

Հանձնաժողովի անդամներ՝Հ.Մարտիկյանը,Հ.Գևորգյանը և Տ.Հարությունյանը նույնպես համաձայնեցին այդ կարծիքի հետ,որը դրվեց քվեարկության.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 5

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. Փաստաբան՝ Դիաննա Անտոնյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 18.09.2018թ ստացված դիմումը քաղաքացի Արմեն Անանյանի սնանկության գործով կառավարիչ՝Ալեքսանդր Կարակեչյանի վերաբերյալ,չքննարկել՝ իրավասու չլինելու պատճառաբանությամբ,դիմումը վերադարձնել «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին՝«ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ Խորհրդում քննարկելու համար:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Աղամյան